ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЩИНА СЕЛА ХОРОНК
АРМАВИРСКОЙ ОБЛАСТИ

ՀՀ Արմավիրի մարզ, գ. Խորոնք
Հեռ. /374- 099/03-08-08/0231/6-86-89/

С. Хоронк Армавирской обл. РА
Тел. /374- 099/03-08-08/0231/6-86-89/

N 153

30 11 2011г

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2011թվականի նոյեմբերի 29-ի արտահերթ թիվ 9 նիստի որոշումները:

Առդիր՝ 11 էջ:

Խորոնք համայնքի ղեկավար ՝ Ս. Նահապետյան

ՀՀ ԱՐՄԱՎ...
Մուտք 11290-11
«01» 12 2011 թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Խորոնք համայնքի
ավագանու արտահերթ թիվ 9 նիստի
N1

29 նոյեմբերի 2011թվական

ՈՐՈՇՈՒՄ

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

Ավագանին որոշեց՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

1. Է. Խաչատրյան
2. Կ. Կարապետյան
3. Ա. Նազարեթյան
4. Ա. Վարդանյան
5. Վ. Ամիրյան

Խորոնք համայնքի ղեկավար՝ Ս.Նահապետյան

2011թվական 29 նոյեբերի

գ. Խորոնք

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ N1 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. Ավագանու 2011 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգի հաստատում.

/զեկուցող Ս.Նահապետյան/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի վարչական տարածքում 2012թ.համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.

/զեկուցող Ս.Նահապետյան/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի կողմից 2012թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.

/զեկուցող Ս.Նահապետյան /

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին:

/զեկուցող Ս.Նահապետյան /

Խորոնք համայնքի ղեկավար՝ Ս.Նահապետրան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

29. նոյեմբերի 2011թ. թիվ 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի գյուղական համայնքի վարչական տարածքում 2012 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Վ. Ամիրյան----------
Ա. Վարդանյան----------
Ա. Նազարեթյան----------
Է. Խաչատրյան----------
Կ. Կարապետյան----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

2011 թվականի նոյեմբերի 29,
գ. Խորոնք

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի
N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ.

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասը հազար դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսան հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հարյուր դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ.
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ.
2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.
3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հինգ հարյուր դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ տասը հազար դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել մեկ հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N 3-Ն

29/11/2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ, հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի գյուղական համայնքի կողմից 2012թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասնհինգերորդ օրը:

Կողմ – 5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. Ամիրյան Վլադիկ
2. Խաչատրյան Էդգար
3. Կարապետյան Կամո
4. Նազարեթյան Արայիկ
5. Վալդանյան Արմեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Արմավիրի մարզի Խորոնք
գյուղական համայնքի ավագանու
2011 թ. նոյեմբերի 29-ի թիվ 9
արտահերթ նիստի N3-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող,ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար 5000(հինգ հազար)դրամ.

2) համայնքի բնակիչ համարվող անձանց տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար 1000(մեկ հազար) դրամ

3) համայնքի բնակիչ համարվող անձանց աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար 1000(մեկ հազար) դրամ.

4) համայնքի բնակիչ համարվող անձանց նպաստներ և կրթաթոշակներ,քաղաքացիների բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիր հաստատելու համար 1000(մեկ հազար) դրամ.

5) համայնքի բնակիչ համարվող անձանց բնութագիր և երաշխավորագիր տալու համար 1000(մեկ հազար) դրամ.

2. Համայնքային ենթակայության մանկապարտեզում երեխաների պահպանման համար ծնողական վճար սահմանել 4000 (չորս հազար) դրամ

1) բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով՝

ա.միակողմանի ծնողազուրկ երեխաների համար 0.50%-ի չափով՝ 1500(մեկ հազար հինգ հարյուր)դրամ.

բ. երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար 100%-ի չափով.

գ. զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների,ինչպես նաև 1-ին կարգի հաշմանդամների երեխաների համար 50%-ի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

29նոյեմբերի 2011թ. թիվ 4-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն՝

Համայնքի բյուջեի եկամուտները

Ընդամենը եկամուտներ	42365,6
այդ թվում՝	
1.ՀԱՐԿԵՐ և ՏՈՒՐՔԵՐ	11983,8
այդ թվում՝	
1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	8805,4
այդ թվում՝	
գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	240,1
հողի հարկ համահնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	8565,3
1.2Գույքային հարկեր այլ գույքից	2898,4
այդ թվում՝	
գույքահարկ փոխադրամիջոցների համար	2898,4
1.3Տեղական տուրքեր	280,0
այդ թվում՝	
ա)համայնքի տարածքում նոր շենքերի,շինությունների (ներառյալ ոչ հիմնական)շինարարություն(տեղադրման) թույլտվության համար	36,0
բ)համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,	

քաղաքաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար	10,0
գ) համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ)ծխախոտի արտադրանքի վաճառքի,իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ոգելից խմիչքների և (կամ)ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար	120,0
դ) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար	80,0
ե) համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար	24,0
զ) համայնքի տարածքում(բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար	10,0
2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	29031,8
ա) պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	29031,8
3.ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1350,0
3.1Գույքի վարձակալությունից եկամուտներ	750,0
այդ թվում՝	
Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	600,0
Այլ գույքից վարձակալությունից մուտքեր	150,0
3.2 Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսաման համար	600,0
պետական բյուջեից ստացվող միջոցներ	
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	
0 1 1 1 Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	22501,0
այդ թվում՝	
աշխատավարձ	11440,0
դրամական խրախուսանք	945,0
սոց.ապահովագրական վճարներ	2266,0
էներգետիկ ծառայություն	1800,0
ջրամատակարարում	200,0
կապի ծառայություն	250,0
ապահովագրություն	100,0
համակարգչային ծառայություն	150,0
տեղեկատվական ծառայություն	150,0
գործուղում	150,0
ներկայացուցչական ծառայություն	1200,0

ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1700,0
մասնագիտական ծառայություն	250,0
գրասենյակային նյութեր և հագուստ	500,0
տրանսպորտային նյութեր	900,0
հատուկ նպատակային այլ նյութեր	400,0
պարտադիր վճարներ	100,0
տնտեսական հարաբերություններ.այդ թվում՝	2600,0
04 2 1 անասնաբուժական ծառայություն	600,0
04 5 1 ճանապարհների ընթացիկ նորոգում	2000,0
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	1000,0
այդ թվում՝	
05 1 1 Աղբահանում	1000,0
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՈՒՆ	1700,0
այդ թվում՝	
06 3 1 Ջրագծի ընթացիկ նորոգում	900,0
06 4 1 փողոցների լուսավորության ընթացիկ նորոգում	800,0
ՀԱՆԳԻՍՏ,ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	4040,0
այդ թվում՝	
08 1 1 Հանգստի և սպորտի ծառայություններ	600,0
08 2 3 Մշակույթի տներ,ակումբներ,կենտրոններ	2640,0
այդ թվում՝	
աշխատավարձ	2100,0
սոց.ապահովագրական վճարներ	540,0
էներգետիկ ծառայություն	
կապի ծառայություն	
մասնագիտական ծառայություններ	
գրասենյակային նյութեր և հագուստ	
կենցաղային և հանրային սննդի նյութ	
08 2 4 մշակութային այլ կազմակերպություններ	800,0
09 1 1 նախադպրոցական կրթություն	5352,0
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	2400,0
10 7 1սոցիալական հատուկ արտոնություններ(այլ դասերին չպատկանող)	2400,0
ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	2772,6

Ավագանու անդամներ՝

1.Է.Խաչատրյան

2.Կ.Կարապետյան

3.Ա.Նազարեթյան

4.Ա.Վարդանյան

5.Վ.Ամիրյան

Խորոնք համայնքի ղեկավար՝ Ս.Նահապետյան

2011 թվական 29 նոյեմբերի

գ.Խորոնք